Հայկազունի Երվանդյանների թագավորությունը: Հայաստանը Ք.ծ.ա. VII–III դդ.

2 ԹԵՄԱ

Դաս 12 Հայկազունի Երվանդյանների թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը. թագավորության հիմնադրումը

Գիտեք, որ...

- *Արմե–Շուպրիա երկիրը Ուրմե անունով ուրարտական թագավորներից առաջինը հիշատակում է Մենուան:*
- *Շուպրիան ասորերեն բառ է, որը համապատասխանում է պատմական Սասուն գավառին և նշանակում է «շրջափակված»:*
- *Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ Սկայորդի նշանակում է սկյութի որդի, իսկ մյուս մասն այն կարծիքն է հայտնում, թե Սկայորդի նշանակում է հսկայի որդի:*
- *Պատմաբաններից ոմանք կարծում են, որ հայոց թագավոր Պարույրի անունը տիտղոս է, որը հուշում է, թե նա էր առաջինը, որը կարողացավ ամբողջ Հայաստանը պարուրել մեկ թագավորության սահմանների մեջ: Դրա համար նրան կոչել են Պարույր:*

Ք.ծ.ա. VII դարի իրադարձությունները՝ ըստ «Սասունցի Դավիթ» էպոսի

Մի շարք մասնագետներ գտնում են, որ էպոսում հիշատակված Բաղդադի խալիֆն Ասորեստանի թագավոր Սենեքերիմն է, իսկ Սանասարը և Բաղդասարը՝ նրա որդիները: Սրանք Ք.ծ.ա. 681 թ. դեկտեմբերին սպանում են իրենց հորը և փախչելով, ապաստան գտնում Սասունում: Քանի որ այդ ժամանակ Հայաստանի մեծ մասը գտնվում էր Վանի ուրարտական թագավորության տիրապետության տակ, ուրեմն Մըսրը Ուրարտուն է, իսկ կրոնական կենտրոնը՝ Մուսասիրը, որ Ք.ծ.ա. IX դարի ասուրական սեպագիր աղբյուրներում ներկայացվում է Մուսրու ձևով: Հետևաբար, Ուրարտուն էպոսում կոչվում է նրա կրոնական կենտրոն Մուսրուի (Մուսասիրի) անունով, որը հայերենի և Սասունի բարբառի հնչյունական օրենքներով դարձել է Մըսր:

Էպոսի առաջին ճյուղը նվիրված է Սենեքերիմի հայրասպան որդիներին: Ասորեստանում նրանց բարձրացրած ապստամբությունը հայերին նույնպես մղել է պայքարի օտար բռնակալների դեմ: Ուրեմն, էպոսը հյուսվել է ոչ թե արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի շուրջ (ինչպես ընդունված է մինչև այժմ հայագիտության մեջ), այլ Ք.ծ.ա. VII դարի սկզբում Ասորեստանում և Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների շուրջ:

Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի պաշարումը 612 թ., հեղինակ՝ Վ. Պետրաուսկաս

Դաս 13-14 Հայաստանի և Աքեմենյան Պարսկաստանի հարաբերությունները: Հայաստանը Աքեմենյան տերության կազմում

Գիտեք, որ...

- *Բեհիսթունյան արձանագրության պարսկերեն մասում Հայաստանը կոչվում է Արմինա, էլամերենում՝ Հարմինույա, իսկ բաբելերեն մասում՝ Ուրարտու: Ուրարտու անվան հիշատակումը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ այն Հայոց պետության անվանումներից մեկն էր:*

- *Աժդահակը իրանական առասպելաբանության չար վիշապն է՝ Աժի Դահականը: Աժի նշանակում է իժ, օձ, վիշապ, որի դեմ կռվում էր ամպրոպի աստվածը: Նա հայոց հին վեպում դարձել է Մարաստանի թագավոր, ում հաղթում և սպանում է Տիգրան Երվանդյանը:*

- *Ստրաբոնի վկայությամբ, Օրոնտես–Երվանդ II–ի նախնին եղել է Դարեհ I–ի զինակից Հիդարնեսը: Գուցե դա է պատճառը, որ Երվանդյան արքայացանկում առկա են Հիդարնես անունով երեք արքա:*

- *Տիրիբազին Քսենոփոնն անվանում է հյուպարքոս, ով Աքեմենյան պաշտոնյաների սանդուղքի ավելի ցածր աստիճանի վրա էր գտնվում և համապատասխանում էր սատրապության ենթակառավարչի պաշտոնին:*

Լրացուցիչ նյութեր

Երվանդ I-ի պատասխանը

Հույն պատմիչ ու զորավար Քսենոփոնը պատմում է, որ հայոց թագավոր Երվանդ I–ը, օգտվելով Մարաստանի և Բաբելոնի միջև առաջացած պատերազմից, ապստամբում է Մարաստանի դեմ: Մարաց թագավոր Աժդահակն իր զորահրամանատար պարսիկ Կյուրոսին զորքով ուղարկում է Հայաստան՝ ապստամբությունը ճնշելու համար: Հայոց արքան, երբ լուր է ստանում Կյուրոսի մոտենալու մասին, շտապ զորք է հավաքում և մարտակարգ կազմում թշնամու դեմ: Կյուրոսին, սակայն հաջողվում է խորամանկությամբ ձերբակալել Երվանդ

Ի-ին ու նրա ընտանիքի անդամներին:

Ձերբակալված հայոց թագավորին Կյուրոսը հարցնում է. «... Այդ ինչո՞ւ այժմ ոչ տուրք ես վճարում, ո՛չ զորք ես ուղարկում և սկսել ես ամրություններ կառուցել: Հայոց արքան պատասխանում է. «...Ես ազատության էի ձգտում, որովհետև գերադասում էի, թե՛ ինքս ազատ լինեմ և թե՛ որդիներիս ազատություն թողնեմ»:

Երվանդ Ի-ի թագաժառանգ որդի Տիգրանի միջնորդությամբ, ով դեռ պատանի հասակից Կյուրոսի որսակից ընկերն էր, նախկին հիմունքներով, բայց վճարվելիք հարկը կրկնապատկելու պայմանով, նոր պայմանագիր է կնքվում Կյուրոսի և հայոց թագավորի միջև, որը պահպանվում է երկար տարիներ:

Հիդարնես II Երվանդյան

Քաղաքամայր Արմավիրի միջնաբերդի արևելյան որմի վրա արձանագրվել է Հիդարնես II-ի ամուսնության պատմությունը: Զարմանալի այրեր են եղել Երվանդյան թագավորները: Հարսնացու ընտրելիս նրանք շատ բծախնդիր էին. թագուհու թեկնածու օրիորդը պետք է ունենար գեղեցկուհուն վայել ամեն բարեմասնություն՝ բարակ իրան, ճերմակ մաշկ, գեղեցիկ պարանոց, նուրբ քիթ ու շրթունք, հմայիչ հայացք, համաչափ ատամնաշար: Հարսնացուի բարեմասնու-թյուններից կարևոր էին նաև լնդերը. ծիծաղելիս կամ ժպտալիս օրիորդի լնդերը չպետք է տեսանելի լինեին դիմացինին: Ասում են՝ արքայատան հարսնացուի այս բարեմասնությունները համակարգել և թագավորական դիվանում գրի է առել Հիդարնես II-ը, ով, իհարկե, հետապնդում էր մի նպատակ՝ պահպանել արքայական տոհմի ազնվազարմությունը:

Կյուրոսը և Հայաստանի թագավորը (ձախից՝ Կյուրոսը ձիու վրա, աջից՝ Երվանդ Ի-ը), նկարիչ՝ Ն. Կուապել

Արքայադուստր Տիգրանուհին Աժդահակի հետ ամուսնությունից առաջ, նկարիչ՝ Ջ. Ջասսո

Դաս 15 Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը: Հայկազունի Երվանդյանների միասնական թագավորության վերականգնումը

Գիտեք, որ...

- *Ք.ծ.ա. 240 թ. առաջին անգամ հունարենով գրի է առնվել Ալեքսանդրի վեպը: Վեպում Ալեքսանդր Մակեդոնացին ձգտում է հասնել անմահության, որի համար ճանապարհ է ընկնում դեպի Հայաստան:*
- *Աքեմենյան Արտաքսերքսես III Օքոս թագավորի օրոք Հայաստանի սատրապն էր Կոդոմանոսը, ով հայոց գահի վրա կրել է «Արտաշատ» անվանումը:*
- *Աքեմենյանների և մակեդոնացիների միջև տեղի ունեցած Իսոսի ճակատամարտում (Ք.ծ.ա. 333 թ.) մարտադաշտ բերված հայոց բանակի թիվը 47 հազար էր՝ 7 հազար հեծելազոր և 40 հազար հետևակ:*
- *«Փոքր Հայք» հասկացությունն առաջին անգամ պատմության մեջ հիշատակվել է Գավգամելայի ճակատամարտի կապակցությամբ: Դրա հիմքում ընկած էր Ք.ծ.ա. V դարից եկող ավանդույթը, ըստ որի՝ Հայաստանի արևմտյան մասը կազմում էր կենտրոնական իշխանությանը ենթակա վարչական առանձին միավոր:*

Լրացուցիչ նյութեր

Ալեքսանդր Մակեդոնացու մտադրությունը

Գավգամելայի ճակատամարտից մի քանի տարի անց հայոց Երվանդ III արքան մի հույն գիտունի հարցնում է.

– Ալ. Մակեդոնացին ինչո՞ւ չհարձակվեց Հայաստանի վրա:

– Պիտի հարձակվեր, բայց Գավգամելայի ճակատամարտը խանգարեց,– պատասխանեց գիտունը:

– Ինչպե՞ս թե, ինչո՞ւ Գավգամելայի ճակատամարտը խանգարեց, չէ՞ որ այն ավարտվեց Ալ. Մակեդոնացու հաղթանակով:

– Այո, դա այդպես է: Այդ ժամանակ հայերի քաջությունն այնպես փայլատակեց, որ Մակեդոնացին հրաժարվեց Մեծ Հայքի վրա արշավելու մտադրությունից՝ զորապետներին ասելով. «Եթե հայերը Դարեհի փառքի համար այսպիսի արիություն են ցուցաբերում, ապա իրենց հողի համար մարտնչելիս մի-մի առյուծ կդառնան: Պետք չէ սրանց հետ գլուխ դնել: Հայերը կարող են մեզ հանկարծակիի բերել և ոտքի տակ տալ մինչև այժմ մեր ձեռք բերած փառքը: Հայքը թողեք մնա մեր հաղթության ճանապարհների եզրին:

Ալեքսանդրի կռիվը Դարեհի դեմ,
նկարիչ՝ Պ. դա Կորտոնա (1650 թ.)

Դաս 16 Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. III դարում: Ներքին և արտաքին մարտահրավերները

Գիտեք, որ...

- *Չնայած Փոքր Հայքը Ք.ծ.ա. III դարում անկախ պետություն էր, բայց նրա առաջնորդները արքայի փոխարեն կրում էին «սատրապ» տիտղոսը:*

- *Փոքր Հայքից հայտնաբերվել է արամեագիր երկկողմանի կնիք, որը կրում է Միթրաուստեսի անունը:*

- *Անտիոքոս III-ը իր քույր Անտիոքիային կնության է տվել Ծոփքի արքա Քսերքսեսին: Հետագայում հենց նրա միջոցով էլ սելևկյան արքան սպանում է Քսերքսեսին:*

- *Արտաշեսի հրամանով զորավար Սմբատը գրավում է Բագարան քաղաք-սրբավայրը: Նա այնտեղ ավարի է ենթարկում Երվանդի գանձերը, գերեվարում հինգ հարյուր ծառա և բերում Արտաշեսին:*

Լրացուցիչ նյութեր

Երվանդ IV արքայի հրամանը

Ծնդոց անտառը տնկել է տվել Երվանդ IV-ը Բագարան քաղաք-սրբավայրի մոտ: Ծնդոց անտառում կային ընտիր սոճիներ, կաղնիներ և ուրիշ ծառատեսակներ: Ծնդոց անտառից թեկուզ մի ծառ կտրողը, Երվանդ արքայի հրամանով, նետվում էր հանցանաց խուց և այնտեղ մնում մեկ տարի: Բանտարկյալին տալիս էին զանազան ուտելիքներ և ջուր, բայց ոչ հաց: Մի ամբողջ տարի նա հացի համ չէր առնում և հանցավորը խուցից դուրս էր գալիս ուժասպառ եղած:

– Դա ամենաարդար պատիժն էր,– ասում էր Երվանդ թագավորը,– թող ծառ կտրողն իմանա, որ ծառը բնության համար նույնն է, ինչ մարդու համար հացը:

Մաքրասեր թագավորը

Ծոփքի թագավոր Քսերքսեսը սովորություն ուներ յոթ օրը մեկ դուրս գալ պալատից և մի քանի պալատականների ու սպասավորների հետ պտույտ գործել քաղաքամայր Արշամաշատի փողոցներով: Եթե որևէ տեղ կեղտ էր նկատում, անմիջապես պարզում էր, թե դրա համար ով է մեղավոր: Նրա թագավորության տարիներին արշամաշատցիները հպարտանում էին իրենց քաղաքի մաքրությամբ:

– Մեր Արշամաշատի փողոցներն այնքան մաքուր են,– ասում էին նրանք,– որ կարող ես յուղը թափել ու հավաքել:

Սերունդները Քսերքսեսին են պարտական այն գովական առածի համար, որ ստեղծել էին ժամանակակիցները.

– Մարդը պիտի իր տունը մաքուր պահի Արշամաշատի նման:

Հայոց արքա Երվանդ IV, նկ.՝ Ջ. Ռոտեր

Դաս 17-18 Հայկազունի Երվանդյանների թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը, տնտեսությունը, հասարակական կյանքը, առօրյան ու կենցաղը

Գիտեք, որ...

- *Աքեմենյան տերության մեջ Հայաստանի գահը համարվում էր երկրորդը կամ երրորդը:*
-
- *Ք.ծ.ա. V դարի վերջում Հայաստանի սատրապ կառավարիչները նվաճել են սեփական դրամ թողարկելու իրավունք: Մեզ հասած սատրապական դրամները թողարկել են Օրոնտես Երվանդ II-ը և Տիրիբազը:*
- *Հերոդոտի նկարագրած Հայաստանի Եփրատ գետով դեպի Բաբելոն իջնող ամենամեծ նավերն ունեին հինգ հազար տաղանդ տարողություն, որը հավասար է 151,5 տոննայի:*
- *Հերոդոտի տեղեկությունների համաձայն՝ Աքեմենյան տերության կազմում գտնվող Հայաստանում ստեղծվել է երկու սատրապություն՝ 13-րդ և 18-րդ սատրապությունները:*
- *Գինին գարեջրից չտարբերելու վերաբերյալ Քսենոփոնի տեղեկությունը ցույց է տալիս, որ մինչև Ք.ծ.ա. V դարի վերջը գարեջուրը անծանոթ է եղել հույներին:*
- *Քսենոփոնը դեռ առաջներում որպես ավար վերցրած իր պառավ ձին նվիրում է գյուղի գեղջավագին, որպեսզի նա սնուցի ու զոհաբերի, քանզի լսել էր, որ այն նվիրված էր արևի աստծուն՝ Հելիոսին:*

Լրացուցիչ նյութեր

Թունավոր մեղր

Դուրս գալով Հայաստանից, հելլենները հասնում են կոլխերի երկիր: Այս վայրերում նրանք գտնում մեծ քանակությամբ մեղվափեթակներ, որոնցից հանած մեղրից ստացվում էր թանկագին խորիսխ: Բայց դրանք ճաշակողները բռնվում էին ինչ–որ տարօրինակ ախտով, քանզի այդ մեղրն ուտողները կորցնում էին իրենց գիտակցությունը և, ընկնելով գետին, նմանվում էին մեռյալների: Քանի որ քաղցր համի պատճառով շատերն էին դրանից կերել, ապա այնքան մեծ բազմություն էր գետնին ընկած, ասես պատերազմում ջախջախվել էին... Հաջորդ օրը, գրեթե նույն ժամին, բոլորն էլ ուշքի էին գալիս և աստիճանաբար վերականգնելով իրենց դատողությունը, վեր էին կենում: Նրանց մարմնական վիճակն այնպիսին էր, ասես թունավորումից էին փրկվել:

Հերոդոտոսը Բաբելոնի հետ Հայաստանի առևտրի մասին

«Այժմ ես կպատմեմ մի բանի մասին, ինչը ինձ այդ քաղաքում (Բաբելոնում) թվում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով (ասորեստանցիները) նավում են գետն ի վար, դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշվեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռենիները (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կաշվե ծածկով, նավի հատակի նման:

Նրանք ոչ նավի հետնամասն են լայնացնում, ոչ էլ նրա առաջամասը նեղացնում, այլ տալիս են դրան վահանի նման կլոր ձև: Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում այն և թողնում հոսանքն ի վար: Նրանք մեծ մասամբ տեղափոխում են գինու կարմիր կարասներ: Նավերը վարում են երկու լայնաբերան թիակներով կանգնած երկու մարդ: Նրանցից մեկը թիակը քշում է դեպի իրեն, մյուսը՝ հրում իրենից: Այդ նավերը պատրաստվում են խոշոր և առավել փոքր... Յուրաքանչյուր նավի մեջ կա կենդանի գրաստ, իսկ խոշորների մեջ՝ մի քանիսը: Նավելով Բաբելոն հասնելուց և բեռը ծախելուց հետո, նրանք վաճառքի են հանում նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշիները բարձում են գրաստների վրա և վերադառնում արմենների մոտ: Քանզի գետն ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել՝ գետի արագության պատճառով: Այդ է պատճառը, որ նրանք նավերը պատրաստում են ոչ թե փայտից, այլ կաշվից: Նրանք, երբ գրաստները քշելով հետ են դառնում արմենների մոտ, նույն ձևով պատրաստում են ուրիշ նավեր”:

Քսենոփոնը գարեջուր է խմում հայ գյուղացիների հետ,
նկարիչ՝ Ռ. Քոչարյան

Դաս 19-20 Քաղաքակրթական փոխազդեցությունները: Երվանդյան Հայաստանի մշակութային ժառանգությունը

- *Մ. Խորենացու վկայությամբ՝ Արմավիրում կառուցվել է մեհյան և այնտեղ կանգնեցվել են Արեգակին, Լուսնին և նախնիների պաշտամունքին նվիրված արձաններ:*

- *Գառնիի բուն ամրոցը հիմնադրվել է Ք.ծ.ա. III դարում: Ամրոցի ներսում գտնվել է ուրարտական սեպագիր մի արձանագրություն՝ փորագրված «վիշապ» կոչված մի քարակոթողի վրա:*

Լրացուցիչ նյութեր

Մարը եկավ, Երվանդ

Արտաշեսը զորքով շարժվում է դեպի Երվանդաշատ: Կեսօրից առաջ հասնում է Երվանդի դաստակերտը՝ Երվանդակերտ և զորքին հրամայում միաձայն աղաղակել «Մար ամատ», որ հայերեն նշանակում է «Մարը եկավ»: Դրանով Արտաշեսը հիշեցնում էր այն վիրավորանքն ու թշնամանքը, որ Երվանդ արքան տածելով իր նկատմամբ՝ իրեն մար էր համարում և նույնն ուզում էր հավատացնել պարսից թագավորին ու Սմբատին: Զինվորների այս միաձայն բացականչության հետևանքով էլ Երվանդի դաստակերտն այնուհետև կոչվում է Մարմետ, հավանորեն Արտաշեսի կամքով, որպեսզի Երվանդի անունն այդ դաստակերտի վրայից ընդմիշտ վերացվի:

Տիգրան և Աժդահակ

Մարաստանի վիշապ–թագավոր Աժդահակը խիստ երկյուղ էր կրում Հայաստանի թագավոր Տիգրանից, մանավանդ, երբ իմանում է, որ իր հակառակորդ պարսիկ Կյուրոսը դաշն է կնքել նրա հետ: Այս երկյուղից շփոթված՝ Աժդահակը մի գիշեր վատ երազ է տեսնում և, քնից սարսափահար վեր թռչելով, իսկույն կանչում է իր բոլոր խորհրդականներին, որ տեսած երազը մեկնաբանեն: Տխուր և ընկճված նա պատմում է երազը: «Մի անծանոթ երկրում, – ասում է, – բարձրանում էր մի մեծ լեռ, որի գագաթը, կարծես, սառնամանիքով էր պատած: Երբ նայում էի սարին, ինձ երևաց նրա գագաթին նստած մի կին, ով երկունքի ցավով էր բռնված: Այդ կինը ծնեց երեք դյուցազուն, որոնցից մեկը, մի ահագին

վիշապ սանձած, հարձակվեց իմ տերության վրա»: Այնուհետև շարունակելով պատմել երազը, Աժդահակը նկարագրում է, թե ինչպես ինքը մենամարտի է բռնվում այդ դյուցազնի հետ և նրա ձեռքով սպանվում:

Մեկնելով երազը, խորհրդականները թագավորին ասում են, թե նրան Տիգրանից վտանգ է սպառնում, որ պետք է զգուշանալ: Վտանգի դեմն առնելու համար Աժդահակը խորհում է ամուսնանալ Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու հետ, կեղծ բարեկամության ու երթևեկության հնար ստեղծելու նպատակով, որպեսզի կարողանա Տիգրանին դավադրաբար բռնել և սպանել: Շատ խնդրելով, նա ամուսնանում է Տիգրանուհու հետ, ում մեծ պատիվների է արժանացնում, բայց գաղտնի չարության ոստայններ է հյուսում:

Մի անգամ Աժդահակը դիմում է Տիգրանուհուն և ասում. «Իմացի՛ր, Տիգրանը իր կնոջ՝ Զարուհու նախանձից գրգռվելով՝ ձգտում է ինձ սպանել, որպեսզի իր կինը քո փոխարեն մարերի վրա թագուհի դառնա և ասպվածների շարքն անցնի: Այժմ մնում է, որ դու կամ մնաս եղբայրասեր և հանձն առնես խայտառակ կործանում, կամ քո անձի օգուտը ճանաչելով, օգնես ինձ՝ եղբորդ կողմից սպառնացող վտանգը վերացնելու համար»: Աժդահակը մտքում դրել էր Տիգրանուհուն սպանել, եթե նա իր հետ չհամաձայնվեր: Խորագետ գեղեցկուհին, հասկանալով, որ դավադրություն է հյուսվում, Աժդահակին սիրալիր խոսքերով է պատասխանում, իսկ հավատարիմ մարդկանց միջոցով Տիգրանին լուր է ուղարկում ամուսնու չար խորհրդի մասին:

Շուտով Աժդահակը Տիգրանին հրավիրում է սահմանագլուխ՝ ինչ–որ կարևոր գործի մասին խորհրդակցելու: Տիգրանը, որ արդեն իմացել էր բանի էությունը, մերժում է Աժդահակի հրավերը: Նրանց մեջ կռիվ է սկսվում: Տիգրանը իր նիզակով ճեղքում է Աժդահակի զրահը, շամփրում նրան: Աժդահակը սպանվում է և նրա մահով կռիվը վերջանում է: Տիգրանը իր քրոջն ուղարկում է Տիգրանակերտում բնակվելու, իսկ Աժդահակի առաջին կնոջը՝ Անուշին իր որդիներով բնակեցնում է Մասիսի ստորոտում:

Աժդահակի երազը, նկարիչ՝ Ջ. Ջասսո